ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԶԱՐՄԻԿ ՎԱՀԱՆԻ ՄԵԼԻՔՅԱՆ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2020

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԷԴՈՒԱՐԴ ՍԵՐԳԵՅԻ ՂԱԶԱՐՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԳՐԻԳՈՐԻ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՎԱՀԱՆՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու
ՄԱՐԻԱՆՆԱ ԷԴՈՒԱՐԴԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2020 թվականի հոկտեմբերի 27-ին, ժամը 14:00-ին՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության 002 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Տերյան փողոց, 74:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թվականի սեպտեմբերի 14-ին:

002 Մասնագիտական խորհրդի
գիտ. քարտուղար, դոցենտ Վ. Ս. Ալեքսանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

<u>Ատենախոսության թեմայի արդիականությունը:</u> Ներդրումային միջավայրի բարելավման անհրաժեշտությունը սննդարդյունաբերության ոլորտում դիտարկվում է մի շարք տեսանկյուններից: Նախ, ոլորտում ներդրումների ընդլայնումը նպաստում է երկրի պարենային անվտանգության ապահովմանը և բնակչության առաջնային պահանջմունքների բավարարմանը: Բացի այդ, սննդարդյունաբերությանը հատուկ է ակտիվ մրցակցային գործունեությունը, երբ շուկան գերհագեցած է ձեռնարկատիրական սուբյեկտներով, որոնք իրենց մրցակցային դիրքերն ապահովելու համար ձգտում են իրականացնել ներդրումային արդյունավետ ռազմավարություն: Հետևաբար, սննդարդյունաբերության ոլորտում ձևավորվում է ներդրումային միջավայր, որը պարբերաբար որակական բարեփոխումների է ենթարկվում, և այս առումով անհրաժեշտություն է առաջանում գործընթացը որոշակիորեն դարձնելու կառավարելի:

Սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային միջավայրը գնահատվում է նաև իր առանձնահատուկ բնութագրիչներով: Ներդրումային գործունեությունից ընդհանրական սպասելիքներից բացի, սննդարդյունաբերությունում ներդրումները մոտիվացվում են նաև տարածաշրջանային սոցիալ-տնտեսական մակարդակների համահարթեցման, բնապահպանական, ոլորտային շահերի (գյուղատնտեսություն, արդյունաբերություն) ներդաշնակեցման առումով:

Ներդրումային միջավայրում մրցակցային բարձր աստիճանը հանգեցնում է նրան, որ սննդարդյունաբերությունում անհրաժեշտություն է ծագում իրականացնելու ներդրումային ծրագրերի վարկանիշավորում՝ նպատակ ունենալով որակական գնահատականներ տալու ներդրումային միջավայրը ձևավորող առանձին ոլորտներին: Այս առումով, արդիական է համարվում սննդարդյունաբերության ներդրումային ոլորտային միջավայրը ձևավորող բաղադրիչների գնահատման շրջանակում համեմատական վերլուծությունների և բենչմարքինգի իրականացումը, ինչպես նաև ներդրումային ուղղությունների գերակայությունների բացահայտումը:

Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում ներդրումային ռիսկերի կառավարման մեխանիզմը դեռևս արդյունավետ չեն գործում, ինչը հնարավորություն չի ընձեռում իրականացնելու ռիսկերը ձևավորող հավանական վնասների դիվերսիֆիկացված փոխհատուցում «գյուղատնտեսական մթերքների արտադրություն - վերամշակում – իրացում» տնտեսական գործունեության շղթայում: Այս առումով անհրաժեշտություն է ծագում ներդրումային ռիսկերը չափել և գնահատել պարենի մատակարարման և վերամշակման տեխնոլոգիական շղթայի շահառուների նպատակադրումների հասանելիության իրատեսությամբ, դրանով իսկ ներազդեցության լծակներ կիրառելով ներդրումային միջավարի ձևավորման որակական բարելավումների վրա:

<u>Հետազոտության նպատակը և խնդիրները:</u> Հետազոտության նպատակն է հանդիսացել ներկայացնել Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում ներդրումային միջավայրի բարելավման ուղիները, որոնք կնպաստեն ներդրումային ոլորտային ծրագրերի արդյունավետ կառավարման

իրագործմանը և ներդրումների գծով հիմնավոր կառավարչական որոշումների կայացմանը:

Ելնելով հետազոտության նպատակից, ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- բացահայտել սննդարդյունաբերության զարգացման ռազմավարությունից բխող ՀՀ ներդրումային միջավայրի բարելավման ուղիները, վերհանել մրցակցային ներդրումային գործունեության հնարավորությունները սննդարդյունաբերության ոլորտում,
- դասակարգել սննդարդյունաբերության ներդրումային միջավայրի ձևավորման վրա ազդող գործոնները՝ ըստ ներդրումային գործունեության վրա ներազդեցության աստիճանի,
- մշակել ներդրումային ծրագրերի վարկանիշավորման համակարգ՝ հնարավորություն ստեղծելով ներդրումային միջավայրը ձևավորող բաղադրիչների գնահատման արդյունքում բացահայտելու ներդրումային ուղղությունների գերակայությունները սննդարդյունաբերության ոլորտում,
- մշակել սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային ռիսկերի կառավարման կառուցակարգ՝ ուղղված ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում առաջացող հավանական վնասների գնահատմանը,
- հիմնավորել սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային միջավայրի կառավարման հայեցակարգային մոտեցումներ, հիմնված ոչ միայն ներդրումների ֆինանսատնտեսական հատույցի, այլև այդ գործընթացին առնչվող ներքին ու արտաքին շահառուների սոցիալ-տնտեսական սպասումների վրա:

<u>Հետազոտության առարկան և օբյեկտը:</u> Հետազոտության ուսումնասիրության օբյեկտ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային միջավայրը՝ իրեն հատուկ որակական բաղադրիչների համակարգով: Հետազոտության առարկան՝ սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային միջավայրի հիմնախնդիրներն են:

<u>Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:</u> Հետազոտության համար տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել սննդարդյունաբերությունում ներդրումային գործընթացի վերաբերյալ հայրենական և արտասահմանյան հետազոտողների աշխատությունները, գիտական հրատարակումները, աշխատանքային փաստաթղթերը, մակրոտնտեսական վերլուծությունները: Ատենախոսությունում օգտագործվել են սննդարդյունաբերության ներդրումային միջավայրին վերաբերող տվյալներ, վիճակագրական ցուցանիշներ և ուսումնասիրման բնագավառին առնչվող այլ նյութեր:

Ատենախոսությունում օգտագործվել են գիտական աբստրակցիայի, փորձագիտական վերլուծության, տրամաբանական և տնտեսամաթեմատիկական մոդելավորման մեթոդներ՝ զուգահեռաբար կիրառելով ներդրումային քաղաքականության իրագործման գծով փորձագիտական ուսումնասիրությունների եղանակներ:

<u>Ատենախոսության գիտական նորույթը և հիմնական արդյունքները:</u> Ատենախոսությունում իրականացված հետազոտությունների ու վերլուծությունների հիման

վրա ստացվել են որոշակի գիտական արդյունքներ, որոնցից գիտական նորույթ են հանդիսանում.

- բացահայտվել են սննդարդյունաբերության ոլորտում ներդրումային միջավայրի վրա ազդող գործոնները, գնահատվել է ներդրումային միջավայրի վրա դրանց ազդեցության աստիճանը՝ ուղղված արդյունավետ կառավարչական որոշումների ընդունմանը,
- ներդրումային ծրագրերի իրականացման առաջնահերթությունների ընտրության նկատառումներով մշակվել է ներդրումային ծրագրերի վարկանիշավորման համակարգ,
- մշակվել է Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային ռիսկերի կառավարման կառուցակարգ՝ ուղղված ներդրումային ծրագրերից բխող հավանական վնասների կանխարգելմանը «գյուղատնտեսական մթերքների արտադրություն - վերամշակում - իրացում» տնտեսական գործունեության շղթայում,
- մշակվել են Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ներդրումային միջավայրի կառավարման հայեցակարգային մոտեցումներ:

<u>Հետազոտությունների արդյունքների գործնական նշանակությունը:</u> Ատենախոսությունն իրենից ներկայացնում է Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային միջավայրի տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված վերջինիս բարելավման հայեցակարգային ուղիների բացահայտմանը:

Ատենախոսության արդյունքները, կատարված առաջարկությունները և մշակված մոտեցումները կարող են գործնական կիրառություն գտնել Հայաստանում իրականացվող ներդրումային քաղաքականությունում՝ նպաստելով կազմակերպությունների ներդրումային գործառույթների բարելավմանը, ներդրումային ծրագրերի արդյունավետության գնահատմանը, ներդրումների ոլորտում կառավարչական որոշումների բարելավմանը:

<u>Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:</u> Հետազոտության հիմնադրույթների և գիտական արդյունքների շուրջ մի շարք աշխատանքային քննարկումներ են իրականացվել տնտեսագետ-տեսաբանների, սննդարդյունաբերության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի Ագրարային էկոնոմիկայի ու Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնների համատեղ նիստում: Ատենախոսության առանձին դրույթներ ներկայացվել են 2 միջազգային գիտաժողովներում: Հետազոտության արդյունքները հրատարակվել են հեղինակի 9 գիտական աշխատություններում:

<u>Հետազոտության ծավալը և կառուցվածքը:</u> Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից, այն ընդգրկում է 32 գծապատկեր և 16 աղյուսակ:

Ատենախոսությունը շարադրված է 128 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջաբանում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, տեսական, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթն ու արդյունքները, դրանց գործնական նշանակությունը, փորձարկումն ու հրապարակումները, հետազոտության ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Ներդրումային միջավայրի ձևավորումը Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում» գլխում վերլուծվում է ՀՀ ներդրումային միջավայրի գրավչության աստիճանը սննդարդյունաբերության ոլորտում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետության վերամշակող արդյունաբերության կառուցվածքում սննդարդյունաբերությունը զբաղեցնում է ամենամեծ տեսակարար կշիռը՝ մոտ 50%: Սննդամթերքի արտադրությանը բաժին է ընկնում վերամշակող արդյունաբերության 39%, իսկ խմիչքների արտադրությանը՝ 11%:

Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին էներգետիկայի ոլորտում իրականացված ուղղակի օտարերկրյա ներդրումների մոտ 90% չափաբաժինը չի կարող ներդաշնակ համարվել սննդարդյունաբերության ոլորտում 5% չափաբաժնի հետ: Բացի այդ, 2018 թ. տարեվերջի դրությամբ գյուղատնտեսության ոլորտում ներդրումների տեսակարար կշիռը կազմել է ընդամենը 0,79%, որոնցից ուղղակի ներդրումները՝ 1,46%, ինչը, իր հերթին, բացասական ազդեցություն է թողնում սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային միջավայրի վրա, քանի որ գյուղատնտեսությունը համարվում է սննդարդյունաբերության առաջնային շղթան և սննդարդյունաբերությանը զուգահեռ, զարգացման համաչափություն է պահանջում (գծապատկեր 1):

Միջազգային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության գործարարության միջավայրը գնահատվում է բավարար: Այսպես՝ Doing Business 2019-ի վարկանիշային աղյուսակում Հայաստանի Հանրապետությունը 190 երկրների շարքում զբաղեցնում է 41-րդ հորիզոնականը (EODB score = 75.37), ընդ որում է այս ցուցանիշը 2018թ. համեմատ, աճել է 2,06%-ով: «Տնտեսական ազատության» ինդեքսը փաստում է տնտեսական ազատության և մի շարք սոցիալական և տնտեսական գործընթացների միջև դրական փոխհարաբերությունները: «Տնտեսական ազատության» ինդեքսի գծով 186 երկրների շարքում Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնում է 47-րդ հորիզոնականը (IEF = 67.7%): Եվրոպայի տարածաշրջանի 44 երկրների շարքում Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնում է 24-րդ տեղը, ընդհանուր գնահատականը փոքր-ինչ ցածր է

տարածաշրջանային նորմայից, բայց բավականին բարձր է համաշխարհային միջինից:[1]



Գծապատկեր 1. Օտարերկրյա ներդրումները՝ ըստ ՀՀ տնտեսության ոլորտների, 2018 թ. դրությամբ (%)[2]

Ներդրումների ազատության դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2008թ. ի վեր՝ Հայաստանի Հանրապետության «Ներդրումների ազատության» ինդեքսը տատանվել է 70-80% սահմաններում առավելագույն մակարդակին հասնելով 2016-2017թթ., այսինքն՝ երկիրը ոչ միայն դասակարգվում է որպես «հիմնականում ազատ», այլև բավականին գերազանցում է միջինացված ցուցանիշը, որը 2019թ. կազմել է 58, 5%: Այս ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը առաջ է անցել Ադրբեջանից, իսկ Վրաստանի հետ գտնվում է միևնույն մակարդակի վրա: Բացի այդ, «ներդրումային ազատության» ինդեքսի 2005-2019թթ. տվյալների հիման վրա կառուցված «էքսպոնենցյալ կորը» ցույց է տալիս, որ նշված ժամանակահատվածում այս ցուցանիշը ունի աճի միտում:

[1] The Heritage Foundation, www.heritage.org, https://www.heritage.org/index/pdf/2019/countries/armenia.pdf
[2] Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, պաշտոնական կայքէջ, www.armstat.am, https://www.armstat.am/file/article/sv_02_19a_420.pdf

Սննդարդյունաբերության ոլորտում ներդրումային միջավայրը ներկայանում է որոշակի առանձնահատկություններով: Ընդհանրական բնութագրիչներից բացի, այստեղ ընդգծվում են առանձնահատուկ բնութագրիչներ, որոնցից առանձնանում են՝ սպառվող սննդամթերքի կառուցվածքը, ազգային ավանդույթները, ոլորտի մրցակցային դաշտը և սպառման սուղ ժամկետները:

Հայաստանի Հանրապետության սննդի արտադրության ոլորտի մրցակցային դաշտի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ներդրումային միջավայրը կարելի է համարել առավել գրավիչ մի շարք ապրանքների արտադրության գծով: Օրինակ՝ մակարոնեղենի կամ պահածոների սպառումը տեսանելի ապագայում շուկան հնարավորություն է տալիս փոխարինել տեղական արտադրությամբ և այդ սննդամթերքների արտադրության ոլորտում իրականացնել ներդրումային ծրագրեր: Այդ հանգամանքով է բացատրվում նաև այն, որ մակարոնեղենի, հրուշակեղենի և պահածոների համախառն արտադրանքը 2014–2018թթ. ընթացքում ունեցել է աճի միտում: Հարկ է նշել նաև, որ 2015թ. ի վեր՝ մակարոնեղենի, հրուշակեղենի և պահածոների գծով արձանագրվել է տեղական արտադրանքի դրական հավելաճի տեմպ, որը 2018թ.՝ 2017թ. նկատմամբ, կազմել է համապատասխանաբար՝ 80%, 23% և 30% (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

Սննդամթերքի համախառն արտադրանքի հավելաճի տեմպի դինամիկան Հայաստանի Հանրապետությունում 2015-2018թթ.(%)[3]

Սննդամթերք	Հավելաճի տեմպ			
	2015թ.՝ 2014թ. նկատմամբ	2016թ.՝ 2015թ. նկատմամբ	2017թ.՝ 2016թ. նկատմամբ	2018թ.՝ 2017թ. նկատմամբ
Երշիկեղեն	-3	15	40	43
Պահածոներ	-4	29	32	30
Հրուշակեղեն	-11	0	17	23
Մակարոնեղեն	-37	16	0	80
Շշալցված ջուր	1	2	14	7

Հատկանշական է նաև, որ հրուշակեղենի և պահածոների համախառն արտադրանքի հավելաճի տեմպը աճել է աստիճանաբար, իսկ մակարոնեղենի ոլորտում 2018թ. գրանցվել է կտրուկ աճ 80%-ով, ինչը վկայում է այս շուկայում տեղի ունեցող լայնածավալ փոփոխությունների մասին:

<u>Ատենախոսության երկրորդ՝ «Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերությունում ներդրումային միջավայրի որակական գնահատման հիմնախնդիրները»</u> գլխում իրականացվել է սննդարդյունաբերության ոլորտի

[3] Կազմվել է հեղինակի կողմից

ներդրումային ներուժի գնահատում և ներկայացվել են ներդրումային միջավայրի և ներդրումային ծրագրերի որակի վարկանիշային գնահատման մոտեցումները:

Սննդարդյունաբերության ներդրումային միջավայրի բարելավման հիմնախնդիրները բնութագրելու նպատակով անհրաժեշտ է վերլուծել նաև ոլորտի «ներդրումային ներուժը», որը բնութագրելիս հաշվի են առնվում ռեսուրսահումքային, աշխատանքային, նորամուծական, ինստիտուցիոնալ և մոտիվացիոն բաղադրիչները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չնայած մեծ ներուժի առկայությանը, ոլորտը դեռևս հետաքրքրություն չի առաջացնում ներդրողների մոտ, իսկ օտարերկրյա ներդրումների մեծ մասը իրականացվել է Սփյուռքի կողմից:

Ներդրումային միջավայրը սերտորեն կապված է մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների հետ: Օրինակ, բազմաշերտ են փոխառնչությունները օտարերկրյա ներդրումների, համախառն ներքին արդյունքի և արտահանման միջև:[4] Սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային միջավայրի գնահատման և կանխատեսումների իրականացման նպատակով, ատենախոսությունում իրականացվել է ոլորտը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծություն, որի շնորհիվ իրականացվել են հետևյալ եզրահանգումները.

- Սննդարդյունաբերությունում և գյուղատնտեսությունում իրականացված ներդրումների միջև առկա է սերտ ուղիղ կախվածություն: Այս ցուցանիշների միջև հաշվարկված կոռելացիայի գործակիցը կազմել է 0.99 կամ 99%, ինչը թույլ է տալիս ևս մեկ անգամ արձանագրել այն, որ սննդարդյունաբերության ոլորտի զարգացումը և ներդրումային միջավայրի հիմնախնդիրները պետք է դիտարկվեն «գյուղատնտեսական մթերքների արտադրություն - վերամշակում - իրացում» շղթայի համատեքստում:
- Բավականին սերտ ուղիղ կախվածություն է նկատվում նաև սննդարդյունաբերական արտադրանքի ծավալի, ոլորտում իրականացված օտարերկրյա ներդրումների ու արտահանված գյուղատնտեսական և սննդարդյունաբերական արտադրանքի միջև, այլ կերպ ասած, իրականացված օտարերկրյա ներդրումները նպաստում են սննդամթերքի արտահանման ծավալների ավելացմանը:
- Սննդարդյունաբերության ոլորտում իրականացված ներդրումների և ընդհանուր ներդրումներում ուղղակի ներդրումների տեսակարար կշռի կոռելացիայի գործակիցը կազմել է -0.91, ինչը նշանակում է, որ ոլորտում իրականացված ներդրումների ավելացման պայմաններում ուղղակի ներդրումների մասնաբաժինը նվազում է:

Սննդարդյունաբերության ոլորտը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների ժամանակային շարքերի մոդելավորման և կանխատեսումների իրականացման նպատակով կառուցվել են մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխությունը բնութագրող դինամիկայի շարքի մոդելներ:

---

[4] Գաբրիելյան Ա.Հայաստանում ՀՆԱ-ի, արտահանման ու օտարերկրյա ներդրումների միջև երկարաժամկետ հավասարակշռության գնահատումը // Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն № 2 (20), Երևան, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2016.- էջ 59, http://ysu.am/files/06A_Gabrielyan.pdf

Կառուցված մոդելները ներկայացնենք ստորև.

1. Սննդարդյունաբերությունում օտարերկրյա ներդրումների հոսքերի դինամիկան բնութագրող քառակուսային մոդել

$$y = 985.17x^2 - 4 \text{ մլն} * x + 4 \text{ մլրդ}.$$

2. Գյուղատնտեսությունում օտարերկրյա ներդրումների հոսքերի դինամիկան բնութագրող գծային մոդել

$$y = 6919.2x - 10 \text{ մլն}$$

3. Գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալի դինամիկան բնութագրող քառակուսային մոդել

$$y = -10916x^2 + 40 \text{ մլն} * x - 40 \text{ մլրդ}.$$

4. Սննդարդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան բնութագրող քառակուսային մոդել

$$y = -1339.2x^2 + 5 \text{ մլն} * x - 6 \text{ մլրդ}$$

5. Գյուղատնտեսական մթերքի և սննդարդյունաբերական արտադրանքի ներմուծման դինամիկան բնութագրող խորանարդային մոդել

$$y = 775.59x^3 - 5 \text{ մլն} * x^2 + 9 \text{ մլրդ}. * x - 6000 \text{ մլրդ}.$$

6. Գյուղատնտեսական մթերքի և սննդարդյունաբերական արտադրանքի արտահանման դինամիկան բնութագրող խորանարդային մոդել

$$y = 507.83x^3 - 3 \text{ մլն} * x^2 + 6 \text{ մլրդ}. * x - 4000 \text{ մլրդ}.$$

Այսպիսով, 2009-2018թթ. տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ սննդարդյունաբերության ոլորտում կատարված ներդրումների ավելացումը նպաստել է արտահանված սննդամթերքի ծավալի մեծացմանը: Այս մասին է փաստում ինչպես համապատասխան ցուցանիշների աճի միտումը, այնպես էլ կոռելացիայի գործակիցը, որը 2009-2018թ. տվյալներով կազմել է 0,92 կամ 92%: Կատարված հաշվարկների համաձայն՝ մինչև 2021թ. սննդամթերքի արտահանման ծավալները կարող են հատել 300 մլրդ. դրամի սահմանը, այն դեպքում, երբ շարունակվի սննդարդյունաբերական արտադրանքի ծավալի աճի միտումը (գծապատկեր 2):

Պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ գյուղատնտեսական համախառն արտադրանքի ցուցանիշը նվազման միտում ունի: Այն առաջին հայացքից կարող է փոխհատուցվել ներմուծվող գյուղատնտեսական մթերքի հաշվին, սակայն մեր կարծիքով, նպատակահարմար է ներմուծվող որոշ ապրանքատեսակների հայրենական արտադրության ապրանքներով փոխարինման քաղաքականության որդեգրումը:



Գծապատկեր 2. Սննդարդյունաբերության ոլորտը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան և միտումը 2009-2018թթ. (մլն դրամ)[5]

[5] Կազմվել է հեղինակի կողմից

Նման մոտեցմամբ ներդրումային միջավայրի ձևավորման որակական գնահատումները առավելապես համընդհանուր են և կրում են մակրոտնտեսական բնույթ: Այդ պատճառով, անհրաժեշտ է մակրոտնտեսական չափումներից բացի, ներդրումային ծրագրերը վարկանիշավորել ըստ որակական բնութագրիչների և դրանով իսկ վերհանել ներդրումային ուղղությունների առաջնահերթությունները՝ ըստ տնտեսավարման առանձին ոլորտների:

Այս նպատակով ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ճյուղի կաթնամթերքի, մսամթերքի, հացամթերքի, հրուշակեղենի և պահածոյագործության ոլորտները՝ կատարելով սոցիոլոգիական հարցումներ ներդրումային պաշարների, ներդրումային գրավչության և ներդրումային շուկայի բնութագրիչների ուղղություններով: Սոցհարցումները կատարվել են սննդամթերքի արտադրության ճյուղի կտրվածքով, յուրաքանչյուր դեպքում հաշվի առնելով ոլորտի ներդրումային պաշարները, ներդրումային գրավչությունն ու ներդրումային շուկայի բաղադրիչների գնահատումները:

Ներդրումային ծրագրերի իրականացման առաջնահերթությունների ընտրության առաջարկվող մեխանիզմը ընդգրկում է 3 փուլ.

1. Տվյալների հավաքագրում,
2. Բենչմարքինգ,
3. Վարկանիշավորում:

Աղյուսակ 2.

ՀՀ սննդամթերքի արտադրության ոլորտում ներդրումային միջավայրի որակական բնութագրիչների վարկանիշային գնահատման սանդղակ[6]

Վարկանիշ	Ներդրումային ոլորտ	Համընդհանուր գործակից
I	Պահածոներ	7,98
II	Կաթնամթերք	7,57
III	Մսամթերք	7,52
IV	Հրուշակեղեն	7,26
V	Հացամթերք	7,04

Հումքային բազայի առկայության առավելագույն միջինացված գնահատականը տրվել է կաթնամթերքի արտադրության ոլորտին, իսկ նորամուծական ներդրումային ծրագրերի առավելագույն առաջարկը արձանագրվել է պահածոյագործության ոլորտում: Ինչ վերաբերում է ներդրումային գրավչությանն ու ներդրումային ակտիվ-

[6] Կազմվել է հեղինակի կողմից

ների պաշտպանվածությանը, ապա այդ ուղղությամբ առավել բարձր գնահատական-ներ են տրվել մսամթերքի արտադրության ոլորտում: Առավելագույն գնահատական-ները հիմք են հանդիսացել բենչմարքինգի իրականացման համար: Շեղումների գործակիցները հաշվարկվել են յուրաքանչյուր ոլորտում ներկայացված ներդրումային միջավայրի գործոնային բաղադրիչի գնահատականը հարաբերելով առավելագույն ցուցանիշին: Այս դեպքում, 1.0 միավորով հանդես են եկել «էտալոնային» ցուցանիշ-ները, իսկ դրանցից ցածր ստացված գործակիցները գնահատել են շեղումները «էտալոնից»: Եվ որքան ցածր է ստացվել գործակիցը, այնքան բարձր է գնահատվել շեղումը կամ հեռավորությունը ոլորտում առկա լավագույն ցուցանիշից:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում Հայաստանի Հանրա-պետության սննդարդյունաբերությունում ներդրումային միջավայրի առավել բարենպաստ ոլորտ է գնահատվել պահածոյագործությունը (աղյուսակ 2), որն առանձնանում է ներդրումների իրականացման տնտեսական արդարացվածության և ներդրումային գործընթացի որակական բաղադրիչների առումով՝ գրավելով վարկանիշային սանդղակի առաջին հորիզոնականը:

<u>Ատենախոսության երրորդ՝ «Ներդրումային միջավայրի կառավարման բարելավման հիմնախնդիրների լուծման ուղիները Հայաստանի Հանրապետութ-յան ագրոպարենային համակարգում»</u> գլխում քննարկվել են ագրոպարենային համակարգի ներդրումային ռիսկերի գնահատման և ներդրումային միջավայրի կառավարման հայեցակարգային հիմնախնդիրները:

Ագրոպարենային համակարգի անխափան և արդյունավետ գործունեության գրավականներից է հանդիսանում դրա գործունեության անընդհատությունը, որը Հայաստանի Հանրապետությունում հաճախ խաթարվում է, հիմնականում կապված գյուղատնտեսության ռիսկայնության և գնագոյացման անորոշության հետ: Նման իրավիճակներում ներխմբային շահերը պահանջում են տեխնոլոգիական շղթայում ընդգրկված կազմակերպություններում կիրառել ոչ թե շուկայական, այլ տրանսֆերային գներ: Տրանսֆերային գնագոյացումը պահանջարկի և առաջարկի հավասարակշռման խնդիր իր առջև չի դնում և հիմնականում ուղղվում է կապակցված կազմակերպությունների համախմբված տնտեսական շահերին:[7]

Ներդրողների համար առաջնային կարևորության խնդիր են հանդիսանում նաև իրականացված ներդրումային ծրագրերի արդյունավետության գնահատման մեթոդաբանական մոտեցումները: Սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային ծրագրերի արդյունավետության որոշման համար կարելի է կատարել արդյունա-վետության գնահատման գործակիցների հաշվարկ և համեմատել դրանք յուրա-քանչյուր գործակցի համար սահմանված համապատասխան արդյունավետության շեմի հետ (աղյուսակ 4):

---

[7] Հակոբյան Ա. Տրանսֆերային գնագոյացման շարժառիթները և դրսևորումները հարկային ոլորտում // Բանբեր ՀՊՏՀ, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2019, էջ 36-37

Աղյուսակ 4.

Սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային ծրագրերի արդյունավետության գնահատման գործակիցներ[8]

Գործակից	Չափի միավոր	Բնութագիր	Հաշվարկի բանաձև	Արդյունավետության չեմ
Ներդրումային ծրագրի շահութաբերությունը (ARR)	%	Ներդրումային ծրագրի շահութաբերությունն է, առանց դիսկոնտավորման	$APP = \frac{CF_{???}}{IC} * 100\%$	> 25
Զուտ ներկա արժեք (NPV)	Հազ. դրամ	Դրամական միջոցների հոսքերի փոփոխությունները, որը ցույց է տալիս տարբերությունը դիսկոնտավորված եկամտի և ծախսերի միջև	$NVP = \sum_{t=1}^{n} \frac{CF_t}{(1+d)^t} - CI$	$> CI * 10\%$
Շահութաբերության ինդեքս (PI)	%	Ներդրումային ծրագրի շահութաբերությունն է, հաշվի առնելով դիսկոնտավորումը	$PI = \frac{NVP}{IC} = \frac{\sum_{t=1}^{n} \frac{CF_t}{(1+d)^t} - CI}{IC}$	> 20%
Դիսկոնտավորված մարման ժամանակահատված (DPP)	Ամիս	Ժամանակահատված, որի ընթացքում սկզբնական ներդրման ծախսերը մարվելու են, հաշվի առած դիսկոնտավորումը	$DPP = \min n$, որի դեպքում $\sum_{t=1}^{n} \frac{CF_t}{(1+d)^t} > IC$	Փոքր ծր.< 24 Միջին ծր.< 36 Խոշոր ծր.< 60

[8] Կազմվել է հեղինակի կողմից

Ներդրումային միջավայրի բարելավման կարևոր հիմնախնդիր է հանդիսանում նաև ներդրումային ռիսկերի արդյունավետ կառավարումը և հավանական վնասների կանխարգելումը: Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում ներդրումային ռիսկերի նվազեցման նպատակով կարելի է սննդարդյունաբերության ոլորտում ձևավորել նաև ներկազմակերպական պահուստային ֆոնդեր, որոնք հնարավորինս կփոխհատուցեն ռիսկային վնասները: Այս առումով նպատակահարմար ենք համարում շահույթից հատկացումների հաշվին սննդարդյունաբերության կազմակերպություններում ձևավորել պահուստային կապիտալ:

Աղյուսակ 5.

Պահուստային կապիտալի մասնաբաժինը ՀՀ սննդարդյունաբերության ոլորտի կազմակերպություններում 2018թ.[9]

Կազմակերպության անվանում	**Պահուստային կապիտալի տեսակարար կշիռը սեփական կապիտալում (%)**	**Պահուստային կապիտալի և ընդհանուր պարտավորությունների հարաբերակցություն (%)**
«Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ	0.11	0.01
«Արարատ քենինգ ֆեքթըրի» ՍՊԸ	0.00	0.00
«Բի ընդ Ջի ֆուդ» ՍՊԸ	12.35	6.24
«Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ	0. 00	0. 00
«Վեդի Ալկո» ՓԲԸ	3.60	3.78
«Մարիլա» ՍՊԸ	0. 00	0. 00
«Երևանի թռչնաբուծական ֆաբրիկա» ԲԲԸ	0.06	0.56
«Մապ» ՓԲԸ	0.00	0.00
«Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ	2.56	9.46
«Կոտայք գարեջրի գործարան» ՍՊԸ	0.00	0.00

[9] Կազմվել է հեղինակի կողմից

Ներկայումս ՀՀ սննդարդյունաբերության ոլորտի կազմակերպությունների մեծամասնությունում պահուստային կապիտալի մասնաբաժինը կամ չափազանց փոքր է, կամ ընդհանրապես բացակայում է (աղյուսակ 5): Կազմակերպության ֆինանսական կայունության տեսանկյունից նպատակահարմար է համարվում, երբ պահուստային կապիտալը կազմում է ընդհանուր սեփական կապիտալի 5%-ից ավելին: Ներդրումային գործունեության հետ կապված պահուստային կապիտալին արվող հատկացումների չափաբաժինը որոշելիս, ներդրումային ռիսկերի գնահատման հետ մեկտեղ, առաջարկում ենք հաշվարկել նաև պահուստային կապիտալի և ընդհանուր պարտավորությունների (ոչ ընթացիկ ու ընթացիկ պարտավորությունների հանրագումար) հարաբերակցության գործակիցը, որը պետք է տատանվի 5-15%-ի սահմաններում՝ կախված ստանձնած պարտավորությունների ռիսկայնության աստիճանից:

Սակայն այս դեպքում առաջանում է մեկ այլ հիմնախնդիր, թե որքան պետք է կազմեն պահուստային կապիտալի ձևավորմանն ուղղված սննդարդյունաբերության կազմակերպությունների հատկացումները, քանի որ, եթե մի կողմից դրանք հնարավոր ռիսկային վնասների փոխհատուցման երաշխիքային աղբյուրներ են ձևավորում, ապա մյուս կողմից, նվազեցնում են միավոր արտադրանքից ստացվող շահույթը: Նման հիմնախնդիրը իր լուծումն է ստանում այն դեպքում, երբ գործնականում հնարավորություն է ստեղծվում չափելու իրականացվող ներդրումների ռիսկայնությունը և կոնկրետ գնահատելու ռիսկերը՝ իրենց արժեքային մեծություններով:

Ներդրողների և ներդրումային գործընթացի փոխկապակցված շահառուների սպասումների համեմատական գնահատումների հիման վրա ներդրումների ռիսկայնության չափման գործընթացը մեր կողմից առաջարկվում է իրականացնել հետևյալ փուլերով.

Առաջին փուլ՝ ընտրվում են այն ցուցանիշները, որոնց վրա հստակ ազդեցություն է ունենալու ներդրումային ծրագրի իրագործումը:

Երկրորդ փուլ՝ յուրաքանչյուր ընտրված ցուցանիշի գծով ներդրողը սահմանում է բալային գնահատական:

Երրորդ փուլ՝ պլանավորման փուլում ներդրողը հարցումներ է կատարում կազմակերպություններում, այնտեղից ստացվում են փոխկապակցված շահառուների բալային գնահատականները նախատեսվող ներդրումների արդյունքում ընտրված ցուցանիշների փոփոխությունների վերաբերյալ:

Չորրորդ փուլ՝ համադրելով ներդրողի և ներդրումային ծրագրերի իրագործմանն առնչվող մյուս շահառուների սպասումները դուրս է բերվում շեղումների միջին թվաբանականը: Եվ որքան այդ միջինը մոտենում է մեկին, այնքան փոքր է գնահատվում ներդրումների ռիսկայնության աստիճանը:

Սննդարդյունաբերության ոլորտում ներդրումային միջավայրի վրա ներազդեցության հնարավորություններ կան ներդրումային ծրագրերի մեկնարկային փուլում, երբ ուսումնասիրվում է ներդրումների ոլորտային շուկան, հաշվի են առնվում ներդրումային գործընթացին առնչվող ներքին և արտաքին գնահատականների վերլուծությունները, վերհանվում են մրցակցային գործունեությանը խոչընդոտող

գործոնները: Այս առումով կարևորվում են նաև ներդրումներին առնչվող օրենսդրական դաշտի կարգավորումները, երբ ներդրողները կառավարությանը նախագծեր են ներկայացնում՝ բնապահպանական և առաջադեմ տեխնոլոգիաների, թողարկվող արտադրանքի արտահանմանը միտված ներդրումների, նոր աշխատատեղերի ստեղծման և մի շարք այլ ուղղություններով՝ ակնկալելով օրենսդրական աջակցություն: Հետևաբար, նման ճանապարհով հնարավորություն է ստեղծվում կառավարելի դարձնելու ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորումը, դրա վրա ազդելով «վերևից»:

Սննդարդյունաբերության ոլորտում ներդրումային միջավայրի վրա ներազդելու հնարավորություն է ստեղծվում նաև «ներքևից», մասնավորապես երբ ծրագրերի մեկնարկին ներդրողների կողմից իրականացվում է ներդրումային հնարավոր ռիսկային վնասների չափում և դրա հիման վրա, ծրագրերի հետագա սպասարկման ժամանակ ռիսկերի կանխարգելիչ միջոցառումների իրականացում: Սննդարդյունաբերության ներդրումային միջավայրի բարելավման վրա ազդեցություն է թողնում նաև ներդրվող ծրագրերի վարկանիշավորման գործընթացը: Նման մոտեցմամբ, որոշակիորեն կառավարելի է դառնում ծրագրերի ընտրության գործընթացը ըստ վարկանիշավորման գործոնների առաջնայնության, և ոչ թե միայն ներդրումների տնտեսական հատույցի կարևորության: Այդ պարագայում, ներդրումային միջավայրի ձևավորման վրա նշանակալից ազդեցություն են թողնում շահառուների սպասումները, որոնք կարող են լինել ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական, բնապահպանական և այլն:

Ամփոփելով, սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային միջավայրի բարելավման և արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է դրա վրա ներազդել ինչպես «վերևից», այսինքն պետության, այնպես էլ «ներքևից»՝ ագրոպարենային համակարգի շրջանակում տնտեսավարողների կողմից: Հարկ է նշել, որ միայն արդյունավետ քաղաքականությունը դեռ չի կարող ապահովել ներդրումային միջավայրի բարելավում և ներդրումների աճ: Նման հնարավորություն է ստեղծվում այն դեպքում, երբ ոլորտում ընդգրկված կազմակերպությունները փոփոխում և բարելավում են ներդրումային ռեսուրսների որակական բաղադրիչները: Տնտեսավարող սուբյեկտների նման վարքագծի դրսևորումը նպաստում է ոլորտում մրցակցային հարաբերությունների ակտիվացմանը, ինչը վերջին հաշվով բերում է ներդրումային շուկայի ակտիվացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեսամեթոդաբանական վերլուծությունների և Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտում ներդրումային միջավայրի ուսումնասիրությունների հիման վրա մեր կողմից կատարվել են մի շարք եզրակացություններ և ներկայացվել են առաջարկություններ ներդրումների կառավարման բարելավման ուղղությամբ.

1. Հայաստանի Հանրապետությունում ներդրումային միջավայրի վերլուծությունը ցույց է տալիս, որ երկիրը ունի զգալի ներդրումային ներուժ և զարգացման հեռանկարներ: «Ներդրումների ազատության» ինդեքսի ուսումնասիրության հիման վրա կարելի է եզրակացնել, որ 2008թ. ի վեր Հայաստանի Հանրապետությունը դասակարգվում է որպես «հիմնականում ազատ» երկիր և այս ցուցանիշով բավականին գերազանցում է աշխարհի միջինացված ցուցանիշը: Հանրապետությունում առկա է բավականին բարենպաստ օրենսդրական դաշտ, ճկուն հարկային քաղաքականություն և կայուն ֆինանսական համակարգ: Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում են նաև ազատ տնտեսական գոտիներ, որոնք օրենսդրական առումով նպաստավոր միջավայր են ձևավորում ներդրումների ակտիվության համար, սակայն այս գործընթացը դեռևս մնում է պասիվ վիճակում:

2. Կատարված հետազոտությունների արդյունքում արձանագրվել է, որ վերջին տարիներին վերամշակող արդյունաբերության կառուցվածքում սննդարդյունաբերությունը զբաղեցնում է ամենամեծ տեսակարար կշիռը՝ շուրջ 50%: Չնայած այդ հանգամանքին, ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում իրականացրած օտարերկրյա ներդրումները կազմել են ընդամենը 5,31%, ընդ որում դրանց մեծ մասը (մոտ 92%) ուղղվել է խմիչքների արտադրության ճյուղին: Ելնելով պարենային անվտանգության ապահովման նկատառումներից, որպես ներդրումային քաղաքականության բարելավման ուղի կարող է հանդես գալ ներդրումներին ուղղված ֆինանսական ռեսուրսների կառուցվածքում մասնավոր միջոցներին զուգընթաց՝ պետական ֆինանսական ռեսուրսների բաժնեմասի աստիճանաբար ավելացմամբ ռազմավարական ուղու ընտրությունը, որով կարձանագրվի պետության մասնակցության ակտիվացում սննդարդյունաբերության ներդրումային ծրագրերում:

3. Բացահայտվել են սննդարդյունաբերության ոլորտում ներդրումային միջավայրի առանձնահատուկ բնութագրիչներ: Դրանցից է բնակչության անվանական ծախսերում սննդամթերքի մասնաբաժնի փոփոխությունների միտումը, որը սննդամթերքի մասով 2014-2018 թվականների ընթացքում զգալիորեն նվազել է: Կարևորվում են նաև սննդակարգի ձևավորման ազգային և կրոնական ավանդույթները, որոնք թելադրում են սննդարդյունաբերության զարգացման ուղղությունները և առաջնահերթությունները: Բացի այդ, առաջնահերթ է համարվում շուկայական մրցակցային դաշտի գնահատումը: Վերլուծությունը ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերության ոլորտը մրցակցային է, կազմակերպությունների քանակը բավականին մեծ է՝ 2019թ դրությամբ մոտ 213

խոշոր և միջին ընկերություն, որոնք գտնվում են մրցակցային հարաբերություն-ներում: Սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային միջավայրի առանձնահատ-կությունն են հանդիսանում նաև թողարկվող արտադրանքի սպառման սուղ ժամկետ-ները և դրանց հետ կապված ռիսկերը:

4. Ներդրումային ներուժի հետազոտման արդյունքների հիման վրա պարզ է դառնում, որ սննդարդյունաբերության ոլորտում առկա են ներդրումային ներուժը ձևավորող հիմնական բաղադրիչները՝ ռեսուրսահումքային, նորամուծական, մոտի-վացիոն և ինստիտուցիոնալ: Սակայն դրան զուգահեռ, կատարված օտարերկրյա ներդրումների 90%-ից ավելին բաժին է ընկնում խմիչքների արտադրությանը, ընդ որում 2014-2018թթ. ընթացքում դրանք ունեցել են աճման միտում: Հակառակ պատկեր է արձանագրվում սննդի արտադրության ոլորտում, որին ոչ միայն բաժին է ընկնում ընդհանուր ներդրումների ընդամենը 8%-ը, այլ նաև դիտարկվող ժամանակահատվածում վերջինների գծով էական աճ չի նկատվում: Այս պատկերը վկայում է այն մասին, որ Հայաստանի Հանրապետության սննդի արտադրության ոլորտը, չնայած զգալի ներուժի առկայության, դեռևս հետաքրքրություն չի առաջացնում օտարերկրյա ներդրողների համար: Համաշխարհային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայիս համաշխարհային գլոբալ տնտեսությունում ներդրողները հետզհետե հրաժարվում են իրենց արտադրությունը էժան աշխատուժով երկրներում տեղաբաշխելուց, ի հաշիվ այն բանի, որ ինտենսիվ աշխատուժ պահանջող գյուղատնտեսական գործընթացները փոխարինվում են ավտոմատացված մեքենաներով և սարքավորումներով: Հայաստանի Հանրապե-տությունը հիմնավորապես ապահովված չէ գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի թողարկման որակյալ աշխատուժով: Այս տեսանկյունից, ոլորտի զարգացման համար անչափ կարևոր է գիտական կենտրոնների որակյալ գործունեությունը և բուհ - արտադրություն համագործակցության սերտացումը:

5. Ներդրումային միջավայրի և արտաքին առևտրի փոխառնչության շրջա-նակի վերլուծության հիման վրա արվել են հետևյալ եզրահանգումները. Առաջին՝ Հայաստանի Հանրապետության ներդրումային շուկան սննդարդյունաբերության տարբեր ոլորտներում տարբեր դրսևորումներ է ցուցաբերում: Մասնավորապես, օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերի դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ խմիչքների արտադրության ոլորտում գրանցվել է զգալի ներդրումային ակտիվություն, ինչը չի կարելի ասել սննդամթերքի արտադրության ճյուղի համար: Գյուղատնտեսության ճյուղը նույնպես չի առանձնացել ներդրումային ակտիվությամբ: Երկրորդ՝ կաթնամթերքի, մսամթերքի, հրուշակեղենի և հացամթերքի գծով արտահանում/ներմուծում համեմատության մեջ հանրա-պետությունում գրանցվել է բացասական սալդո: Արտահանման և ներմուծման դրական տարբերության միտում է դիտվում միայն պահածոների արտադրության գծով, որոնք 2018թ. դրությամբ ամբողջ սննդարդյունաբերական արտադրության արտահանման 50% են կազմել: Երրորդ՝ սննդարդյունաբերության ոլորտում ներդրումային ակտիվությունը, ներդրումների ծավալների մեծացումը և շրջապտույտի արագացումը հանգեցնում է հայրենական սննդամթերքի

արտահանման ծավալների ավելացմանը, ներմուծվող ապրանքների սեփական արտադրությամբ փոխարինմանը և ներմուծման ծավալների կրճատմանը:

6. Սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային միջավայրի գնահատման և կանխատեսումների իրականացման նպատակով, վերջին 10 տարիների տվյալների հիման վրա կատարված հետազոտությունները ցույց տվեցին. Առաջին՝ սննդարդյունաբերությունում և գյուղատնտեսությունում իրականացված ներդրումների միջև առկա է սերտ ուղիղ կախվածություն: Երկրորդ՝ իրականացված օտարերկրյա ներդրումները նպաստում են սննդամթերքի արտահանման ծավալների ավելացմանը: Երրորդ՝ ոլորտում իրականացված ներդրումների ավելացման պայմաններում ուղղակի ներդրումների մասնաբաժինը նվազում է: Չորրորդ՝ մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխությունը բնութագրող ռեգրեսիայի մոդելների հիման վրա իրականացված հաշվարկները թույլ են տալիս կանխատեսել, որ մինչև 2021թ. սննդամթերքի արտահանման ծավալները կարող են հասնել 300 մլրդ. դրամի սահմանը, այն դեպքում, երբ շարունակվի սննդարդյունաբերական արտադրանքի ծավալի աճի միտումը:

7. Ներդրումային ծրագրերի իրականացման առաջնահերթությունների ընտրության նկատառումներով առաջարկվել է վարկանիշավորման համակարգ, որը հնարավորություն է ստեղծում. Առաջին՝ ներկայացնելու որակական գնահատականներ ներդրումային միջավայրը ձևավորող առանձին ոլորտների գծով: Երկրորդ՝ իրականացնելու համեմատական վերլուծություն սննդարդյունաբերության ներդրումային ոլորտային միջավայրը ձևավորող բաղադրիչների գնահատման շրջանակում և բացահայտելու ներդրումային ուղղությունների գերակայությունները: Առաջարկվող վարկանիշավորման համակարգի կիրառման արդյունքում 7,98 համընդհանուր գործակցով Հայաստանի Հանրապետության սննդարդյունաբերությունում ներդրումային միջավայրի առավել բարենպաստ ոլորտ է գնահատվել պահածոյագործությունը:

8. Ագրոպարենային համակարգի անխափան և արդյունավետ գործունեության գրավականներից է հանդիսանում դրա գործունեության անընդհատությունը, որը Հայաստանի Հանրապետությունում հաճախ խաթարվում է, հիմնականում կապված գնագոյացման անորոշության հետ: Նման պայմաններում առաջարկում ենք գյուղատնտեսական մթերքներ արտադրող և սննդի վերամշակող տնտեսավարող սուբյեկտների միջև տրանսֆերային գների կիրառումը, ինչը նպաստում է ոլորտում իրականացվող գործընթացների անընդհատության ապահովմանը: Նորամուծական ներդրումային ծրագրերի արդյունավետության մակարդակի բարձրացման տեսանկյունից նպատակահարմար կարող է լինել սննդարդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտների կազմակերպությունների միջև երկկողմանի ներդրումային ծրագրերի իրականացումը՝ հետապնդելով ոլորտային փոխշահավետ տնտեսական նպատակներ:

9. Մշակվել է սննդարդյունաբերության ոլորտում ներդրումային ռիսկերի կառավարման կառուցակարգ, որը հնարավորություն է ընձեռում իրականացնելու ռիսկերը ձևավորող հավանական վնասների փոխհատուցում «գյուղատնտեսական

մթերքների արտադրություն - վերամշակում - իրացում» տնտեսական գործունեության շղթայում: Ներդրումային գործունեության հետ կապված պահուստային կապիտալին արվող հատկացումների չափաբաժինը որոշելիս՝ ներդրումային ռիսկերի գնահատման հետ մեկտեղ, առաջարկում ենք հաշվարկել նաև պահուստային կապիտալի և ընդհանուր պարտավորությունների հարաբերակցության գործակիցը, որը պետք է տատանվի 5-15%-ի սահմաններում՝ կախված ստանձնած պարտավորությունների ռիսկայնության աստիճանից: Այս մոտեցմամբ հնարավորություն է ընձեռվում հստակ հաշվարկել պահուստային կապիտալի հատկացումների արժեքային մեծությունը՝ հիմնվելով պարտավորությունների գումարի վրա:

10. Առաջարկվել է ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում ներդնել ներդրումային միջավայրի կառավարման հայեցակարգ, որի հիմքում ընկած է այն մոտեցումը, որ սննդարդյունաբերության ոլորտի ներդրումային միջավայրի բարելավման և արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է դրա վրա ներազդել ինչպես «վերևից», այնպես էլ «ներքևից»: Հայեցակարգում վեր են հանվել այն գործոնները, որոնց վրա հնարավոր է ներազդեցություն ունենալ օրենսդրական լծակներով: Այդ գործոններից առաջնային են՝ հարկային արտոնությունները, նորարարական ծրագրերի խթանումը, շինարարական աշխատանքների թույլտվությունները և փոքր մասնաբաժնով ներդրողների պաշտպանվածությունը: Համակարգվել են կառավարման գործընթացի այն ուղիները, որոնցով հնարավորություն կստեղծվի ներազդել սննդարդյունաբերության ներդրումային միջավայրի վրա «ներքևից»՝ ռիսկերի կանխարգելում, սննդարդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտների միջև փոխշահավետ ներդրումային ծրագրերի իրականացում, ներդրումային ծրագրերի առաջնահերթությունների սահմանում:

Ատենախոսության հիմնական դրույթները և ստացված արդյունքները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Մելիքյան Զ. ՀՀ ագրարային ոլորտի զարգացման գործընթացը ներդրումային միջավայրի բարելավման գործում // «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, մաս 2, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2018. - էջ 120-128
2. Մելիքյան Զ. Ներդրումների էությունը, դերն ու նշանակությունը ՀՀ ագրարային ոլորտում // Материалы международной научной конференции по актуальным проблемам развития сельского хозяйства в Республике Армения, Ереван, Электронный вариант материалов международной конференции НАУА, 2018. - стр. 327-331
3. Մելիքյան Զ. ՀՀ ներդրումային միջավայրի գրավչությունը և գնահատման մոտեցումները // Ագրոգիտություն և տեխնոլոգիա, ՀԱԱՀ N(67), Երևան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան, 2019. - էջ 36-41
4. Մելիքյան Զ. Սննդարդյունաբերության ռազմավարական զարգացման միտումները և ներդրումները ՀՀ-ում // «Ֆինանսներ և հաշվապահական հաշվառում» գիտական հանդես 1 (3), «ՀՈՒՄԿ» հրատարակչություն, 2019. - էջ 101-112
5. Melikyan Z. Peculiarities of investment management in agro-industrian complexes // International journal of innovative technologies in economy 4 (24), Warsaw, RS Global Sp. z O.O., 2019. - p 12-15
6. Меликян З., Анисян Г. Роль лизинга в управлении инвестиционными рисками в пищевой промышленности // «Лизинг. Технологии бизнеса» No 05/2019, Москва, издательство «Внешэкономиздат» 2019. - стр. 35-39
7. Меликян З. Оценка инвестиционной среды потенциала пищевой промышленности РА // Digital era and modern business challenges, International scientific conference May 10-11, Tbilisi, High school Geprgia, 2019. - p. 114-116
8. Melikyan Z. Investment Environment Issues in Food Industry of RA // Ֆինանսներ և հաշվապահական հաշվառում գիտական հանդես 2 (4), Երևան, «ՀՈՒՄԿ» հրատարակչություն, 2019. - էջ 139-147
9. Меликян З. Вопросы управления инвестиционными рисками в пищевой промышленности // Economics №12 (64), Warsaw, Colloquium-journal, 2020. – p 17-20

МЕЛИКЯН ЗАРМИК ВАГАНОВИЧ

ВОПРОСЫ УЛУЧШЕНИЯ ИНВЕСТИЦИОННОЙ СРЕДЫ В СФЕРЕ ПИЩЕВОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Автореферат дисертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – «Экономика и управление хозяйством, его сферами»

Публичная защита диссертации состоится 27-го октября 2020 года в 14^{00} часов на заседании Специализированного Совета 002 по экономике ВАК РА, действующего в Национальном аграрном университете Армении, по адресу: 0009, Ереван, ул. Теряна 74.

РЕЗЮМЕ

Основной целью исследования является разработка и представление путей улучшения инвестиционного климата в пищевой промышленности Республики Армения, что будет способствовать реализации эффективного управления инвестиционными программами и принятию обоснованных решений по управлению инвестициями. Необходимость улучшения инвестиционного климата в пищевой промышленности рассматривается с нескольких точек зрения. Прежде всего, расширение инвестиций в отрасли способствует обеспечению продовольственной безопасности страны и удовлетворению первичных потребностей населения. Кроме того, для пищевой промышленности Армении характерна активная конкурентная деятельность, когда рынок перенасыщен хозяйствующими субъектами, которые стремятся реализовать эффективную инвестиционную стратегию для обеспечения своей конкурентоспособности.

Исследования и анализ, проведенные в диссертации, привели к ряду научных результатов, из которых следующие могут рассматриваться как научная новизна:

- Выявлены факторы, влияющие на инвестиционный климат в пищевой промышленности, и дана оценка их влияния на инвестиционный климат с целью принятия эффективных управленческих решений.
- Для выбора приоритетов реализации инвестиций разработана система ранжирования инвестиционных программ.
- Разработана структура управления инвестиционными рисками в пищевой промышленности РА, направленная на предотвращение возможных потерь в ходе реализации инвестиционных программ в цепи «производство сельскохозяйственной продукции - переработка - реализация» видов экономической деятельности.
- Разработаны концептуальные подходы к управлению инвестиционной средой в пищевой промышленности Армении.

В первой главе диссертации анализируется степень привлекательности инвестиционной среды Армении в пищевой промышленности. Исследования показывают, что пищевая промышленность занимает наибольшую долю в структуре перерабатывающей

промышленности Армении - около 50%. В обрабатывающей промышленности производство продуктов питания составляет 39%, а производство напитков - 11%. Однако доля иностранных инвестиций в пищевой промышленности Армении составляет всего 5% от всех иностранных инвестиций. Приток инвестиций в пищевую промышленность, увеличение количества совместных предприятий способствовует решению проблем продовольственной самообеспеченности и обеспечению занятости населения.

Во второй главе диссертации оценен инвестиционный потенциал пищевой промышленности, представлены подходы к рейтинговой оценке инвестиционных направлений и инвестиционных программ. Для описания основных проблем на пути к улучшению инвестиционного климата пищевой промышленности необходимо проанализировать «инвестиционный потенциал» отрасли. Инвестиционная среда также тесно связана с рядом макроэкономических показателей, таких как иностранные инвестиции, валовый внутренний продукт и экспорт товаров пищевой отрасли.

В третьей главе диссертации представлены механизмы оценки инвестиционных рисков и концептуальные вопросы управления инвестициями в аграрном секторе Армении. Одной из гарантий бесперебойной и эффективной работы агропродовольственной системы является ее непрерывная деятельность, которая в Армении часто нарушается, в основном из-за рисков связанных с сельским хозяйством и неопределенности ценообразования. В связи с этим, еще одним ключевым вопросом улучшения инвестиционного климата является эффективное управление инвестиционными рисками и предотвращение возможных потерь. Следует также отметить, что только эффективная политика не может гарантировать улучшение инвестиционной среды и инвестиционный рост. Такая возможность создается, когда вовлеченные в отрасль организации меняют и улучшают качественные составляющие инвестиционных ресурсов. Проявление такого поведения хозяйствующих субъектов способствует усилению конкурентных отношений в отрасли, что в конечном итоге приводит к активизации инвестиционного рынка.

Диссертация представляет собой комплексное исследование, которое включает некоторые основные рекомендации, направленные на выявление путей улучшения инвестиционной среды в пищевой промышленности Республики Армения. Практическая значимость диссертации заключается в том, что результаты работы и разработанные подходы могут быть применены в инвестиционной политике, реализуемой в Армении, способствуя качественному улучшению инвестиционной деятельности организаций, оценке эффективности инвестиционных программ, совершенствованию управленческих решений в инвестиционной среде пищевой промышленности.

MELIKYAN ZARMIK VAHAN

ISSUES OF IMPROVEMENT OF THE INVESTMENT ENVIRONMENT IN THE FOOD INDUSTRY OF REPUBLIC OF ARMENIA

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of economics in the speciality 08.00.02 – «Economics and Management of Economy and its Spheres»

The defense of the thesis will take place on 27 October 2020, at 14.00 o`clock at the Meeting of 002 specialized Council in Economics of SCC RA, operating at National Agrarian University of Armenia by address, 74 Teryan street, Yerevan, 0009.

SUMMARY

The main goal of the study is to develop and to present the improvement ways of the investment climate in the food industry of the Republic of Armenia, which will contribute to the implementation of effective management of investment programs and the informed decision-making on investment management. The need to improve the investment climate in food industry is considered from several points of view. First of all, the expansion of investment in the industry contributes to ensuring the country's food security and satisfying the primary needs of the population. In addition, the Armenian food industry is characterized by vigorous competitivity, when the market is oversaturated by business entities that seek to implement an effective investment strategy to ensure their competitiveness.

The research and analysis carried out in the thesis led to a number of scientific results, the following of which can be considered as a scientific novelty:

- Factors affecting the investment climate in the food industry were identified, and their impact on the investment climate was assessed in order to make effective managerial decisions.
- A system of ranking the investment programs was developed in order to select investment implementation priorities.
- A structure for managing investment risks in the food industry of the Republic of Armenia was developed, aimed at preventing possible losses during the implementation of investment programs in the chain of “agricultural production - processing - implementation” economic activities.
- Conceptual approaches to managing the investment environment in the food industry of Armenia have been developed.

The first chapter of the dissertation analyzes the degree of attractiveness of the food industry investment environment of Armenia. To describe the main problems on the way to improving the investment climate in the food industry, it is necessary to analyze the "investment potential" of the industry. The investment environment is also closely tied to a number of macroeconomic indicators such as foreign investment, gross domestic product, and food export. investments in the food industry in Armenia is only 5% of all foreign investments. The inflow of investments in the food industry, an increase in the number of joint ventures will help to solve the problems of food self-sufficiency and provide employment for the population.

In the second chapter of the dissertation, the investment potential of the food industry was evaluated, approaches to the rating assessment of investment areas and investment programs are presented. To describe the main problems on the way to improving the investment climate in the food industry, it is necessary to analyze the "investment potential" of the industry. The investment environment is also closely tied to a number of macroeconomic indicators such as foreign investment, gross domestic product and food export.

The third chapter of the dissertation presents mechanisms for assessing investment risks and conceptual issues of investment management in the agricultural sector of Armenia. One of the guarantees of the smooth and efficient operation of the agri-food system is its continuous operation, which is often disrupted in Armenia, mainly due to the risks associated with agriculture and uncertainty in pricing. In this regard, another key issue for improving the investment climate is the effective management of investment risks and prevention of possible losses. It should also be noted that only an effective policy cannot guarantee an improvement in the investment environment and investment growth. This opportunity is created when the organizations involved in the industry change and improve the quality components of investment resources. The manifestation of such behavior of economic entities contributes to the strengthening of competitive relations in the industry, which ultimately leads to the activation of the investment market.

The dissertation is a comprehensive study, which includes some basic recommendations aimed at identifying the ways to improve the investment environment in the food sector of the Republic of Armenia. The practical significance of the thesis lies in the fact that the results of work and the developed approaches can be applied in the investment policy implemented in Armenia, contributing to a qualitative improvement in the investment activities of organizations, evaluating the effectiveness of investment programs, and improving managerial decisions in the investment environment of the food industry.